Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քաղսիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2-րդ դասարանի դասվարի (15 դասաժամ) և 4-րդ դասարանի դասվարի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3×4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինգրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի բնօրինակները համեմատվում են պատճենների հետ, որից հետո բնօրինակները վերադարձվում են: Մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը մասնակիցը կարող է համալրել անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **հունվարի 25-ը** ներառյալ, ամեն օր՝ **ժամը 10:00-ից 14:00**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. հունվարի 31-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Կոտայքի մարզի Քաղսիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գ. Քաղսի, 11 փ., 1-ին փակուղի: Տեղեկությունների համար զանգահարել 093-65-17-90 հեռախոսահամարով: